ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **14/10/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Ասատրյանը, Գրիգոր Ղարիբյանը, Արթուր Մելոյանը, Հմայակ Խաչատրյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նարինե Խաչատրյան, Ռիմա Մանուկյան, Գոռ Առաքելյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղայանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 8-րդ նստաշրջանի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 10 հերթական նիստի օրակարգը՝
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի երրորդ եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու և Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 14-ի N91 որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին.
5) Հողամասի վարձակալության պայմանագիրը վերակնքելու և տարեկան վարձավճարը վերանայելու մասին.
6) Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախնական համաձայնություն տալու մասին.
7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26 -ի N 150 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 14-ի N 188 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
9) Բնակարանը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.
10) Հենասյունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին
11) Հողամաս ձեռք բերելու համաձայնություն տալու մասին,
12) «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամ Հովիկ Գոգոյանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 106)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌԻՄԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 169-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում «4212» (Էներգետիկ ծառայություններ) «8500,0» թիվը փոխարինել «9500,0» թվով:
2) Բաժին 6 խումբ 4 դաս 1 (Փողոցների լուսավորում) հոդված «4212» (Էներգետիկ ծառայություններ) «14000,0» թիվը փոխարինել «15000,0» թվով:
3) Բաժին 8 խումբ 2 դաս 3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «40699.0» թիվը փոխարինել «58573.0» թվով:
4) Բաժին 9 խումբ 1 դաս 1 (Նախադպրոցական կրթություն) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «170355.2» թիվը փոխարինել «182680.4» թվով:
5) Բաժին 9 խումբ 5 դաս 1 (Արտադպրոցական դաստիարակություն) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «31435.0» թիվը փոխարինել «44335.0» թվով:
6) Բաժին 11 խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված «4891» (Պահուստային միջոցներ) «133254.5» թիվը փոխարինել «87255.3» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 107-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի երրորդ եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 108)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 91 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերիր մասին» օրենքի 37-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի, 1-ին և 3-րդ ենթակետերի պահանջներով և հիմք ընդունելով լիազոր ներկայացուցիչ՝ Վազգեն Սարգսի Նիկողոսյանի դիմումը

1. Էդգար Վազգենի Նիկողոսյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Նոր թաղամաս 3-րդ փողոց 25 հողամաս հասցեում գտնվող 0,055 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0016-0050, վկայական N 10062022-07-0077) մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Նոր թաղամաս 3-րդ փողոց 25/2 հողամաս հասցեում գտնվող 0,00578 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0016-0227), մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող՝ բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով 607 698 ՝ (վեց հարյուր յոթ հազար վեց հարյուր իննսուն ութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վեցամսվա ընթացքում:
4. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 14-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում

օտարելու մասին» N 91 որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 109)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին , 3-րդ և 7-րդ ենթակետերի պահանջներով և հիմք ընդունելով Մեխակ Սասունի Միքայելյանի դիմումը

1. Մեխակ Սասունի Միքայելյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Օրբելի եղբայրների փողոց 21/3 հողամաս հասցեում գտնվող 0,2809 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0025-0122, վկայական N 10082023-07-0221) մակերեսով հատուկ պահպանվող տարածքների՝ հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Օրբելի եղբայրների փողոց 19/3 հողամաս հասցեում գտնվող 0, 1594 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0025-0139), մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող՝ հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով 25785500 (քսանհինգ միլիոն յոթ հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վեցամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-2 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 110)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԵՐԱԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 3-րդ կետով, Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով 2025 թվականի հունիսի 03-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը

1 Տալ համաձայնություն՝ .Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության՝ 0,12 հա մակերեսով, / կադաստրային ծածկագր՝ 07-045-0353-0374/ Նինա Վաչագանի Գևորգյանի հետ կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը /կնքված 2008 թվականի հոկտեմբերի 10-ին/ վերակնքել Տաթևիկ Կառլենի Մանվելյանի հետ:
2. Պայմանագրով սահմանված տարեկան վարձավճարը 2210 / երկու հազար երկու հարյուր տաս / Հայաստանի Հանրպետության դրամի փոխարեն, հողամասի տարեկան վարձավճար սահմանել 20 000 / քսան հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Տաթևիկ Կառլենի Մանվելյանի հետ կնքել համապատասխան համաձայնագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 111)*

ԼՍԵՑԻՆ

ԲԱՋՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի, հիմք ընդունելով 2025 թվականի սեպտեմբերի 24-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը՝

1.Տալ նախնական համաձայնություն «ՓԱԲԼԻՔ ԿԱՊԻՏԱԼ » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Ծաղկաձոր համայնքի ք. Ծաղկաձոր, Սարալանջի
46 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքներ իրականացնելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 112)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N150 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Արծափ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 150 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 113)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 188 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022թվականի նոյեմբերի 14 -ի «Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների համար հավելավճար սահմանելու մասին» N 188 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 1-ին կետի՝ «2%-ի » թիվը փոխարինել « 5 տոկոսի» թվով և բառով :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 114)*

ԼՍԵՑԻՆ

ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշումը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Մեղրաձոր գյուղի 3-րդ փողոցի, 68/6 շենքի 26 հասցեում գտնվող բնակարանը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 115)*

ԼՍԵՑԻՆ

ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի թիվ 66 որոշումը և անհատ ձեռնարկատեր «Դավիթ Ղարիբյան Գրիշի» դիմումը՝

1. Թույլատրել՝ անհատ ձեռնարկատեր «Դավիթ Ղարիբյան Գրիշի» օգտագործել Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի Միեր Մկրտչյան փողոցում գտնվող արտաքին լուսավորության 37 (երեսունյոթ) հենասյուներ՝ գովազդային վահանակներ ամրացնելու և 40 (քառասուն) հենասյուներ՝ հաղորդալարեր անցկացնելու նպատակով, համայնքի կողմից սահմանված մատուցվող ծառայությունների վճարի դիմաց:
2. Համայնքի ղեկավարին՝ անհատ ձեռնարկատեր «Դավիթ Ղարիբյան Գրիշի» հետ կնքել համապատասխան պայմանագիր:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 116)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՅԿ ԲԱԲԱՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18- րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «ՖՈԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 2025թվականի սեպտեմբերի 29-ի շուկայական արժեքի գնահատման եզրակացությունը՝՝

1. Տալ համաձայնություն ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի Խ. Կեչառեցու փողոց 3 մասնաշենք հասցեում գտնվող, Լիլիթ Հրաչիկի Աբրահամյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի, հասարակական կառուցապատման՝ նպատականին և գործառնական նշանակության 0,159 հա մակերեսով հողամասը և 387,9 քառ.մ մասնաշենքը (կադաստրային

ծածկագիր 07-005-0025-0017) ձեռք բերել 122 535 000 (մեկ հարյուր քսաներկու միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով:

2. Համայնքի ղեկավարին՝ կնքել առուվաճառքի պայմանագիր:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 117)*

Ավագանու անդամներ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղալյանը